ՎԱՐԿ ԹԻՎ 3735-ARM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

(Հանրային արդյունավետության և
ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

2018թ. նոյեմբերի 9

ARM 51060

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ թվագրված 2018 թվականի նոյեմբերի 9-ով, կնքված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ «Վարկառու») և ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (այսուհետ՝ «ԱԶԲ») ՄԻՋԵՎ:

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԱՅՆ, ՈՐ.

Ա) ԱԶԲ-ն Վարկառուից ստացել է 2018 թվականի սեպտեմբերի 20-ով թվագրված՝ զարգացման քաղաքականության վերաբերյալ գրությունը (այսուհետ՝ «Քաղաքականության մասին գրություն»), որում սահմանված են որոշակի նպատակներ, քաղաքականություն և գործողություններ, որոնք նկարագրված են սույն Վարկային համաձայնագրի 1-ին ժամանակացույցում և մշակվել են Վարկառուի ֆինանսական հատվածը զարգացնելու համար՝ շեշտը դնելով պետական պարտքի և ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգի հզորացման, պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքների զարգացման, ներդրողների շրջանակի ընդլայնման ու կորպորատիվ թափանցիկության բարելավման վրա (այսուհետ՝ «Ծրագիր»),

Բ) Այդ Ծրագիրը սույն Վարկային համաձայնագրի 1-ին ժամանակացույցի 1-ին պարբերության մեջ նկարագրված ծրագրային մոտեցման (այսուհետ՝ «Ծրագրային մոտեցում») երկրորդ ենթածրագիրն է, և Վարկառուն դիմել է ԱԶԲ՝ Ծրագրի նպատակների շրջանակներում վարկ ստանալու համար, և

(Գ) ԱԶԲ-ն համաձայնել է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից վարկ տրամադրել Վարկառուին՝ սույն Համաձայնագրով սահմանված ժամկետներով և պայմաններով,

ՀԵՏԵՎԱԲԱՐ, ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՀՈԴՎԱԾ I

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին 1.01. ԱԶԲ-ի՝ 2017 թվականի հունվարի 1-ով թվագրված՝ Սովորական գործառնությունների վարկավորման կանոնների (այսուհետ՝ «Վարկավորման կանոններ») բոլոր դրույթները սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ կիրառելի են նույն ուժով ու գործողությամբ այնպես, ինչպես դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն Համաձայնագրում, այնուամենայնիվ դրանք ենթակա են հետևյալ փոփոխությունների.

ա) Բաժին 2.01(խզ)-ը հանվել է և փոխարինվել հետևյալով.

«Ծրագիր» եզրույթը նշանակում է ծրագիր, որի համար ԱԶԲ-ն համաձայնել է վարկ տրամադրել՝ հաշվի առնելով Վարկային համաձայնագրում տրված ձևակերպումը և այն, որ այդ ձևակերպումը կարող է պարբերաբար փոփոխվել ԱԶԲ-ի և Վարկառուի միջև ձեռք բերված համաձայնությամբ,

բ) «Նախագիծ» եզրույթը, Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում, պետք է փոխարինվի «Ծրագիր» եզրույթով:

գ) Բաժին 2.01(խը)-ը հանվել է և փոխարինվել հետևյալով.

«Ծրագրի իրականացման մարմին» եզրույթը նշանակում է մարմին կամ մարմիններ, որոնք պատասխանատու են Վարկային համաձայնագրին համապատասխան Ծրագիրն իրականացնելու համար:

դ) «Նախագծի իրականացման մարմին» եզրույթը, Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում, պետք է փոխարինվի «Ծրագրի իրականացման գրասենյակ» եզրույթով:

Բաժին 1.02. Սույն Վարկային համաձայնագրում գործածվելու դեպքում Վարկավորման կանոններով սահմանված եզրույթները գործածվում են

Վարկավորման կանոններով սահմանված իմաստներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրում դրանք փոփոխվում են կամ կիրառվում են այլ համատեքստում: Սույն Վարկային համաձայնագրում գործածված լրացուցիչ եզրույթներն ունեն հետևյալ իմաստները.

ա) «ՀԿԲ» նշանակում է Վարկառուի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

բ) «Համարժեք դրամական միջոցներ» նշանակում է Ծրագրի վարկային միջոցներից առաջացած և սույն Վարկային համաձայնագրի 4-րդ ժամանակացույցի 4-րդ պարբերությամբ սահմանված ազգային արժույթ,

գ) «Դեպոզիտային հաշիվ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի 3«ա» պարբերությամբ սահմանված հաշիվ,

դ) «Իրականացնող մարմիններ» նշանակում է ՖՆ ,ՀԿԲ և ՏԶՆՆ կամ դրանցից յուրաքանչյուրի իրավահաջորդը, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար,

ե) «Վարկային հատկացումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկային հատկացումների ձեռնարկը (2017 թվական՝ պարբերաբար կատարվող փոփոխություններով),

զ) «ՏԶՆՆ» նշանակում է Վարկառուի տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն,

է) «ՖՆ» նշանակում է Վարկառուի ֆինանսների նախարարություն,

ը) «Քաղաքականության մատրիցա» նշանակում է Վարկառուի և ԱԶԲ-ի կողմից համաձայնեցված և Քաղաքականության մասին գրությանը կցված քաղաքականության մատրիցա, որով սահմանվում են Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակներում իրականացված կամ իրականացվելիք գործողությունները, և

թ) «Ծրագրի իրականացման մարմին»՝ Վարկավորման կանոնների նպատակներից ելնելով և դրանց իմաստով, նշանակում է ՖՆ կամ նրա ցանկացած իրավահաջորդը, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար և պատասխանատու է Ծրագրի իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել հիսուն միլիոն ԱՄՆ դոլարի ($50,000,000) չափով վարկ, ընդ որում՝ նշված գումարը կարող է պարբերաբար փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթներին համապատասխան:

բ) Վարկի մայր գումարի մարման ժամկետը 12 տարի է, իսկ վճարման արտոնյալ ժամանակահատվածը՝ համաձայն սույն Բաժնի «գ» պարբերության:

գ) Սույն Բաժնի «բ» պարբերության մեջ գործածված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է մայր գումարի առաջին մարման օրվան նախորդող ժամանակահատվածը՝ սույն Վարկային համաձայնագրի 2-րդ ժամանակացույցով սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան:

Բաժին 2.02. Վարկառուն պարբերաբար ԱԶԲ-ին վճարում է տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված և չվճարված վարկի մայր գումարի նկատմամբ՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն տոկոսադրույքով, որը հավասար է հետևյալ գումարին.

ա) Լոնդոնի միջբանկային տոկոսադրույք (LIBOR), և

բ) 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով սահմանված

կարգով, հանած 0.10%՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով:

Բաժին 2.03. Վարկառուն տարեկան վճարում է 0.15%-ի չափով պարտավորավճար: Այս վճարը հաշվեգրվում է վարկի ամբողջ գումարի նկատմամբ (հանած պարբերաբար առհանվող գումարները)՝ սկսած սույն Վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից:

Բաժին 2.04. Վարկի տոկոսագումարը և մյուս վճարները կատարվում են կիսամյակը մեկ՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին:

Բաժին 2.05. Վարկառուն վարկային հաշվից առհանված՝ վարկի մայր գումարը վերադարձնում է սույն Վարկային համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի դրույթներին համապատասխան:

Բաժին 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարման նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել վարկի պայմաններում հետևյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

i) առհանված և չվճարված կամ չառհանված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի արժույթի փոխարինում հաստատված արժույթով,

ii) առհանված և չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի փոփոխում՝ լողացող տոկոսադրույքից ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը, և

iii) առհանված և չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի նկատմամբ կիրառվող լողացող տոկոսադրույքի սահմանափակում՝ այդ լողացող տոկոսադրույքի նկատմամբ տոկոսադրույքի սահմանային չափը կամ տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն չափերը սահմանելու միջոցով:

բ) Սույն Բաժնի «ա» պարբերության համաձայն հայցված և ԱԶԲ-ի կողմից ընդունելի փոխարկման առաջարկը համարվում է «Փոխարկում»՝

Վարկավորման կանոնների 2.01 բաժնի «զ» պարբերությամբ սահմանված կարգով և ուժի մեջ է մտնում Վարկավորման կանոնների V հոդվածի դրույթներին և Փոխարկման ուղեցույցին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն ապահովում է, որ վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի իրականացման համար կատարված ծախսերը ֆինանսավորելու համար՝ սույն Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Բաժին 3.02. Վարկային միջոցները առհանվում են սույն Վարկային համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի դրույթներին համապատասխան, ընդ որում՝ նշված ժամանակացույցը կարող է պարբերաբար փոփոխվել՝ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև ձեռք բերված համաձայնությամբ:

Բաժին 3.03. Վարկավորման կանոնների 9.02 բաժնի նպատակներից ելնելով՝ վարկի փակման վերջնական ամսաթիվ է համարվում 2018 թվականի դեկտեմբերի 31-ը կամ այլ ամսաթիվ, որի վերաբերյալ ԱԶԲ-ն և Վարկառուն կարող են պարբերաբար համաձայնության գալ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պարտավորություններ

Բաժին 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ ժամանակացույցով սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Բաժին 4.02. Վարկավորման կանոնների 7.01 և 7.04 բաժիններում նշված հաշվետվությունների և տեղեկատվության շրջանակներում՝ Վարկառուն ԱԶԲ-ին է տրամադրում կամ ապահովում է, որ տրամադրվեն ԱԶԲ-ի կողմից ողջամտորեն պահանջվող՝ Ծրագրի իրականացման վերաբերյալ, այդ թվում՝ Քաղաքականության մասին գրության մեջ նշված թիրախների իրագործման և գործողությունների կատարման վերաբերյալ բոլոր հաշվետվություններն ու ամբողջ տեղեկատվությունը:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Բաժին 5.01. Սույն Վարկային Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Վարկավորման կանոնների Բաժին 10.04-ի նպատակներից ելնելով, սույն Վարկային Համաձայնագրի ամսաթվից 90 օր անց:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Բաժին 6.01. Վարկավորման կանոնների 12.02 բաժնի նպատակներից ելնելով՝ Վարկառուի ֆինանսների նախարարը նշանակվում է որպես Վարկառուի ներկայացուցիչ:

Բաժին 6.02. Վարկավորման կանոնների 12.01 բաժնի նպատակներից ելնելով՝ նշվում են հետևյալ հասցեները.

Վարկառուի կողմից՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք Ադամյան փող. 1

Երևան 0010,

Հայաստան

Ֆաքս՝

(374 11) 800-132

ԱԶԲ-ի կողմից

Ասիական զարգացման բանկ

ԱԶԲ պողոտա 6

քաղ. Մանդալույոնգ

1550 Մետրո Մանիլա

Ֆիլիպիններ

Ֆաքս՝

(632) 636-2444

(632) 636-2424

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ, սույն Համաձայնագրի կողմերը, ի դեմս իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների, իրենց անունից ստորագրում են սույն Վարկային համաձայնագիրը վերը նշված օրվա դրությամբ և փոխանցում այն ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Նախարար,

Ֆինանսների նախարարություն

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

_____

ՇԵՅՆ ՌՈԶԵՆՏԱԼ

Հայաստանյան գրասենյակի տնօրեն

Հայաստանում մշտական առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ծրագրային մոտեցման հիմնական նպատակը Վարկառուի ֆինանսական շուկաների ծավալի ընդլայնումն է: Ծրագրային մոտեցումը կազմված է երկու ենթածրագրից, և Ծրագիրը երկրորդ ենթածրագիրն է: Ծրագրի շրջանակը ներառում է. ա) Վարկառուի պետական պարտքի և ֆիսկալ ռիսկերի կառավարման գործելակերպերի և քաղաքականության հզորացումը, բ) պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքների բարելավումը, գ) ֆինանսական գործիքների բազայի և ներդրողների շրջանակի ընդլայնումը և կորպորատիվ թափանցիկության մակարդակի բարձրացումը: Ծրագիրն առավել մանրամասն նկարագրված է Քաղաքականության մասին գրության մեջ:

2. Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Մարման ժամանակացույց

1. Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են վարկի մայր գումարի մարման ամսաթվերը և դրանցից յուրաքանչյուրի ժամանակ վճարվելիք՝ վարկի ընդհանուր մայր գումարի մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով (այսուհետ՝ «Վճարման մասնաբաժին»): Եթե վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված են, ապա մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը ԱԶԲ-ի կողմից սահմանվում է՝ ա) մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ առհանված և չվճարված վարկի ընդհանուր մայր գումարը բազմապատկելով բ) մայր գումարի յուրաքանչյուր մարման օրվա դրությամբ Վճարման մասնաբաժնով, իսկ մարման ենթակա այդ գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են՝ սույն Ժամանակացույցի 4-րդ պարբերության մեջ նշված գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

Վճարման ամսաթիվը	Վճարման մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ)
Մայիսի 1, 2022թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2022թ.	4.166667
Մայիսի 1, 2023թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2023թ.	4.166667
Մայիսի 1, 2024թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2024թ.	4.166667

Մայիսի 1, 2025թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2025թ.	4.166667
Մայիսի 1, 2026թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2026թ.	4.166667
Մայիսի 1, 2027թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2027թ.	4.166667
Մայիսի 1, 2028թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2028թ.	4.166667
Մայիսի 1, 2029թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2029թ.	4.166667
Մայիսի 1, 2030թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2030թ.	4.166667
Մայիսի 1, 2031թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2031թ.	4.166667
Մայիսի 1, 2032թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2032թ.	4.166667
Մայիսի 1, 2033թ.	4.166667
Նոյեմբերի 1, 2033թ.	4.166667
Ընդամենը	100.000000

2. Եթե վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը սահմանվում է հետևյալ կերպ.

ա) վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ սույն Ժամանակացույցի 1-ին պարբերությանը համապատասխան, և

բ) վարկի մայր գումարի առաջին մարման օրվանից հետո ցանկացած առհանման դեպքում գումարները վերադարձվում են այդ առհանմանը հաջորդող՝ վարկի մայր գումարի մարման յուրաքանչյուր օրը՝ ԱՋԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն Ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում նշված՝ մայր գումարի տվյալ մարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (այսուհետ՝ «Սկզբնական վճարման մասնաբաժին»), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող մայր գումարի մարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարն է. մարման ենթակա այդ գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են՝ սույն Ժամանակացույցի 4-րդ պարբերության մեջ նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով՝ մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվան նախորդող երկու օրացուցային ամսվա ընթացքում կատարված առհանումները համարվում են որպես առհանված և չվճարված՝ առհանման օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվա դրությամբ,

և ենթակա են վճարման՝ առհանման օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվանից սկսած մայր գումարի մարման յուրաքանչյուր օրը:

4. Անկախ սույն Ժամանակացույցի 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա որևէ մասը հաստատված արժույթի փոխարկելու դեպքում, նշված հաստատված արժույթի այդ կերպ փոխարկված գումարը, որը ենթակա է մարման փոխարկման ժամանակահատվածում ընկնող՝ մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ անմիջապես նշված փոխարկումից առաջ գործող արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ՝ i) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է ԱԶԲ-ի կողմից տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում վճարվելիք՝ հաստատված արժույթով մայր գումարները, կա՛մ ii) եթե ԱԶԲ-ն, Փոխարկման ուղեցույցին համապատասխան, այդպիսի որոշում կայացնի, ապա՝ Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով:

5. Եթե վարկի մայր գումարի առհանված և չվճարված մասը պարբերաբար արտահայտվում է վարկի մեկից ավելի արժույթներով, ապա սույն Ժամանակացույցի դրույթները կիրառվում են վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր այդպիսի գումարի համար մշակվի մարման առանձին ժամանակացույց:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 3

Վարկային միջոցների առհանումը

1. Բացառությամբ սույն Ժամանակացույցում սահմանված ձևի կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքերի՝ վարկային միջոցները հատկացվում են Վարկային հատկացումների ձեռնարկին համապատասխան:

2. Վարկառուն վարկային հաշվից առհանում կատարելու դիմում է ներկայացնում ԱԶԲ, որը կազմվում է ԱԶԲ-ի կողմից ընդունելի ձևով:

3. ա) Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ ներկայացնելուց առաջ Վարկառուն ներկայացնում է ՀԿԲ-ում բացված հաշիվը (այսուհետ՝ «Դեպոզիտային հաշիվ»), որին մուտքագրվում են վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները: Դեպոզիտային հաշիվը բացվում, կառավարվում և փակվում է Վարկառուի համար ընդունելի կարգավորումներին և ընթացակարգերին համապատասխան:

բ) Դեպոզիտային հաշվի հետ կապված վարվում են առանձին հաշիվներ և գրանցամատյաններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան: ԱԶԲ-ի պահանջով Վարկառուն պետք է ապահովի այնպիսի անկախ աուդիտորների կողմից Դեպոզիտային հաշվի վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացումը, որոնց որակավորումները, փորձառությունը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, համապատասխանում են աուդիտի միջազգային ստանդարտներին կամ դրանց ազգային համարժեքին, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար: Դրանք կազմելուց հետո կարճ ժամկետում, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան ԱԶԲ-ի պահանջից 6 ամիս անց, այդպիսի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների օրինակները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունները տրամադրվում են ԱԶԲ-ին՝ անգլերենով:

4. Սույն ժամանակացույցի առդիրում նշված որևէ ապրանքի ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով վարկային միջոցներ չեն կարող առհանվել:

5. Վարկային հաշվից վարկառուն առհանում կարող է կատարել սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո:

Արգելված ծախսերի ցանկ

Վարկային միջոցների որևէ առհանում չի կատարվում հետևյալ ծախսերի դեպքում՝

i) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք ներառված են ՄԱԿ-ի Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման վերանայված 3-րդ տարբերակի (այսուհետ՝ «ՄԱՍԴ, վերանայված 3-րդ տարբերակ») հետևյալ խմբերում կամ ենթախմբերում, կամ ցանկացած հետագա փոփոխությունների արդյունքում ՄԱՍԴ-ում ներառման ենթակա խմբերում կամ ենթախմբերում, ինչպես նշվում է ԱԶԲ-ի՝ Վարկառուին ուղղված ծանուցման մեջ:

Աղյուսակ. Արգելված ապրանքներ

Գլուխ	Բաժին	Ապրանքների նկարագրությունը
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Ծխախոտ չմշակված. ծխախոտի թափոններ
122		Ծխախոտ մշակված (ծխախոտի փոխարինիչ պարունակող կամ չպարունակող)
525		Ռադիոակտիվ և նմանատիպ նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր՝ մշակված կամ չմշակված
718	718.7.	Միջուկային ռեակտորներ և դրանց մասերը, ջերմանջատիչ տարրեր (ՋԱՏ)՝ չճառագայթված միջուկային ռեակտորների համար
728	728.43.	Ծխախոտի մշակման մեքենաներ

897	897.3.	Ոսկերչական զարդեր՝ ոսկու, արծաթի կամ պլատինի խմբին պատկանող մետաղներից (բացառությամբ ժամացույցների ու ժամացույցների պատյանների) և ոսկերիչների կամ արծաթագործների աշխատանքներ (ներառյալ տեղադրված թանկարժեք քարերը)
971		Ոսկի, ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքանյութի և խտանյութերի)

Աղբյուրը՝ Միացյալ ազգերի կազմակերպություն

ii) ծախսեր Վարկառուի արժույթով կամ այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են Վարկառուի տարածքից,

iii) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են այնպիսի պայմանագրի շրջանակներում, որը ֆինանսավորվելու է կամ դրա ֆինանսավորման համաձայնություն է տրվել որևէ տեղական կամ միջազգային ֆինանսական հաստատության կամ գործակալության կողմից, այդ թվում՝ ԱԶԲ-ից ստացված որևէ վարկի կամ դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած պայմանագրի շրջանակներում,

iv) ծախսեր՝ ռազմական կամ ռազմականացման նպատակով կամ շքեղության սպառման համար նախատեսված ապրանքների համար,

v) ծախսեր թմրանյութերի համար,

vi) ծախսեր շրջակա միջավայրի համար վտանգավոր այնպիսի ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներկրումն արգելված են Վարկառուի օրենսդրությամբ կամ միջազգային այնպիսի համաձայնագրերով, որոնց կողմ է հանդիսանում Վարկառուն, և

vii) ծախսեր, որոնք կատարվել են որևէ այնպիսի վճարի հաշվին, որն արգելված է Վարկառուի կողմից՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության VII գլխի շրջանակներում ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի որոշման:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 4

Ծրագրի իրականացում և այլ հարցեր

Իրականացման հետ կապված կարգավորումներ

1. ՖՆ-ը Ծրագրի իրականացման մարմինն է և պատասխանատու է Ծրագրի ընդհանուր իրականացման, այդ թվում՝ քաղաքականության բոլոր միջոցառումների հետ համապատասխանության, միջոցների հատկացման և հաշվառում վարելու համար: ՖՆ-ը և ՀԿԲ-ը Ծրագրի շրջանակներում իրենց համապատասխան բաղադրիչներն իրականացնող մարմիններ են:

Քաղաքականության միջոցառումներ և երկխոսություն

2. Վարկառուն ապահովում է, որ Քաղաքականության վերաբերյալ գրության և Քաղաքականության մատրիցայի մեջ սահմանված՝ Ծրագրի շրջանակներում ընդունված քաղաքականության բոլոր միջոցառումները շարունակեն ուժի մեջ մնալ Ծրագրային մոտեցման իրականացման ընթացքում և դրանից հետո:

3. Վարկառուն ԱԶԲ-ին տեղեկացնում է բազմակողմ և երկկողմ օգնություն տրամադրող այլ կազմակերպությունների հետ քաղաքականության վերաբերյալ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են նշանակություն ունենալ Ծրագրի իրականացման համար, ինչպես նաև ԱԶԲ-ին հնարավորություն է տալիս՝ դիտողություններ ներկայացնելու այդ քննարկումների արդյունքում առաջացած քաղաքականության հետ կապված ցանկացած առաջարկության վերաբերյալ: Նախքան այդպիսի որևէ առաջարկի վերջնական տարբերակի մշակումը և իրականացումը Վարկառուն պետք է հաշվի առնի ԱԶԲ-ի տեսակետները:

Համարժեք դրամական միջոցների օգտագործում

4. Վարկառուն ապահովում է, որ համարժեք դրամական միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համապատասխան որոշակի ծրագրերի և

գործողությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով:

Կառավարում և հակակոռուպցիոն գործողություններ

5. Վարկառուն, Ծրագրի իրականացման մարմինը և Իրականացնող մարմինները պետք է՝ ա) համապատասխանեն ԱԶԲ-ի հակակոռուպցիոն քաղաքականությանը (1998 թվականից առ այսօր կատարված փոփոխություններով) և ընդունեն, որ ԱԶԲ-ն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող ցանկացած ենթադրյալ կոռուպցիոն, խարդախ, դավադիր կամ հարկադրանք պարունակող գործելակերպ, և բ) համագործակցեն այդպիսի ցանկացած հետաքննության մասով և տրամադրեն այդ հետաքննության բավարար իրականացման համար անհրաժեշտ ամբողջ աջակցությունը:

Մշտադիտարկում և ուսումնասիրություն

6. Վարկառուն ապահովում է, որ՝ ա) Իրականացնող մարմինները կատարեն պարբերական ուսումնասիրություններ՝ գնահատելու Ծրագրային մոտեցման շրջանակը, իրականացման հետ կապված կարգավորումները, առաջընթացը, ձեռքբերումներն ու ազդեցությունները, և բ) ՖՆ-ն պատասխանատու է Ծրագրի մշտադիտարկման բոլոր տվյալները վարելու և արդյունքները գնահատելու համար: ԱԶԲ-ի կողմից Ծրագրային մոտեցման կիսամյակային ուսումնասիրությունները դյուրացնելու նպատակով Վարկառուն ժամանակին տրամադրում է համապատասխան մակրոտնտեսական և ֆինանսական տվյալներ, ինչպես նաև դրանց հետ կապված տեղեկություններ այնպիսի մանրամասնությամբ, որը կարող է հիմնավոր ձևով պահանջվել ԱԶԲ-ի կողմից: Ուսումնասիրությունները համարվում են Վարկառուի և ԱԶԲ-ի միջև քննարկումների հիմք հետագա այնպիսի բարեփոխումների և միջոցառումների համար, որոնք կարող են որպես անհրաժեշտ կամ ցանկալի դիտարկվել ֆինանսական հատվածի շարունակական զարգացման համար:

7. Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինները

ուսումնասիրեն Ծրագրի՝ իրենց համապատասխան բաղադրիչների նպատակների շրջանակը, իրականացման հետ կապված կարգավորումները, ազդեցությունն ու ձեռքբերումները և այդ մասին հաշվետվություն ներկայացնեն Ծրագրի իրականացման մարմին՝ Ծրագրի իրականացման մարմնին հնարավորություն ընձեռելով կատարելու ԱԶԲ-ին հաշվետվություն ներկայացնելու՝ իր համար սահմանված պահանջները՝ սույն Վարկային համաձայնագրի ժամկետներին համապատասխան:

Սույնով հավաստում եմ, որ կցված տեքստը 2018թ. նոյեմբերի 9-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրի անգլերեն ստորագրված տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարության